Հինգերորդ մի 'ի երից բաժնոյ կնոջն և կամ առն եթէ ունիցին զաւակ.

Վեցերորդ երկու 'ի երիս բաժնոյն որդոյ և մին դստերն զի համարեսցի երկու որդին և մի դուստրն.

Եօթներորդ եթէ ոչ ունիցի զորդի և ոչ դուստր դարձցի առ ծնողս ննջեցելոյն.

Ութներորդ եթէ ոչ ունիցի ծնող դարձցի առ եղբայրս և քեռն իւր.

Իններորդ եթէ ոչ ունիցի դարձցի առ 'ի սերունդսն եղբարց։

ԳԼՈՒԽ ՃԼԱ.

Ամենայն երիտասարդ որ խօսի ընդ կուսի առ 'ի ամուսնութիւն պարտէ ընդունելութիւն երկուց կողմէ ծնողաց, եթէ ոչ ունի ծնողս 'ի որ ոք մերձաւոր ընտանեաց, և թուղթ հրամանի իշխանի տեղոյն որում բնակին ամուսնացողքն, յայնժամ քահանայէն Օրհնեսցէ առ 'ի ամուսնութիւն։

ԳԼՈՒԽ ՃԼԲ.

Ամենայն այր և կին ամուսնացեալք վախճանելով մինն եթէ գտցի 'ի մէջ սոցա թուղթ դաշնադրութեան հարսանեաց ստացուածք ննջեցելոյն կատարումն առցէ ըստ դաշնադրութեան նոցա, եթէ ոչ ըստ Օրինաց։